

Բարև բոլորին: Ես Մարիամն եմ, ծնվել և ապրում եմ Ստեփանակերտում, որն աշխարհի գոգտրիկ անկյունն է:

Ես ուսնողուհի եմ, սովորում եմ Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսում, ուսումնասիրում եմ հայոց լեզու և գրականություն: Փետրվար ամսից սկսած ուսումնասիրում եմ նաև ֆրանսերեն լեզու:

Սեպտեմբերի 26-ը բոլորիս համար գեղեցիկ օր էր, այդ օրը նշվում էր մայրաքաղաքի օրը, որը հագել էր իր երփնեքանգ գույները և կազմակերպվել էին գեղեցիկ մշակութային միջոցառումներ, իսկ հաջորդ Օրը...

Ո՛չ, մեկն մի ուրիշ օր էին սպասում, ահանային գեղեցիկ արևոտ օր, բայց թե՛ անու հրթիռակոծությունը փոխարինեց սպասված գեղեցիկ օրվան և թռչունների երգին: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 27-ին, մեկն պետք է հանապարհվեին Հայաստան:

Գիշերը չէի քնել և աղոթում էի Աստծուն: Թվում էր, թե 2016թ-ի ապրիլ ամիսն էր, 4 օր և ամեն ինչ կավարտվի, բայց դժբախտաբար ոչ...

Այդ գիշեր մտովի տեսա իմ մանկության այգին, թվում էր, թե դա իմ վերջին այցն էր այս գեղեցիկ վայրերում և եթե կարողանայի ամուր կգրկելի քաղաքս:

Հայրս, եղբայրս, սիրածս տղան և բոլորը մարտի դաշտ էին մեկնել: Լսվում էին միայն պայթյունների ձայները և սիրտս լցվում էր արյունով, երբ տեսնում էի թե ինչպես են մարդիկ լինում քաղաքում: Քաղաքս դարձել էր մեռան:

Ստեփանակերտը իմ քաղաքն է, այն այստեղ է: Իմ հայրենիքն այնտեղ է՝ որտեղ իմ համերկրացիները դարձել են պատերազմի գոհը: Նրանք մեր հերոսներն են, նրանք գոհաբերել են իրենց կյանքը մեզ համար:

Եթե ես ասեմ, որ այսօր ամեն ինչ հանգիստ է, ես կստեմ, ամեն ինչ անորոշ է: Եթե մի ժողովրդի թե՛ անմահ ստոր է, այդ ժողովուրդը չի կարող քնել հանգիստ, ով գիտի թե նա էլ ինչի է ընդունակ: Նա կարող է ցանկացած պահի մի այնպիսի բան անել, որը նորից բազում կյանքեր կխլի:

Հայ ժողովուրդը գոյություն ունի, և հավետ գոյություն կունենա:

Մարիամ 19 տարեկան: